


Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

(Առաջնորդ Իրաքի հայոց բեմի)

Վ Ե Ր Դ Ե Վ Ե Ռ



ուրբ Գրիգոր Լուսավորչի ատենեն ի վեր, հայոց մոտ Տեր Հիստա Քրիստոսի Պայծառակերպության տունը ծանոթ է նաև

Վարդավառ անունով:

Բայց Վարդավառը, իբր հեթանոսական տուն, կկատարվեր հայոց քրիստոնեությունն ընդունելեն ալ առաջ:

Հայոց հին կրոնին մեջ Վարդավառը հավանաբար տոնն էր Աստղիկ դիցուհիին, որ աստվածն էր սիրո, գեղեցկության, գուլգեն նաև հեշտանքի և ցանկության, ինչպես էր հույներու մոտ Ափրոդիտեն, որուն Մելիդիների սքանչելի արձանը ջարդուփշուր ըրին վանդալները: Բայց գեղարվեստի սիրահարները համախմբեցին անոր երեսուն կտորները և վերանորոգեցին զայն մեծ ճարտարությունով:

Հայոց Աստղիկի մեծագույն մեհյանը կգտնվեր Աշտիշատի (Տարոն) մեջ և կկոչվեր «Սենյակ Վահագնի»: Տարոնի մեջ էր նաև Աստղաբերդը կամ Աստղաբերդը:

Աշտիշատի մեջ, Աստղիկի բնակության շուրջը, ամեն տարի աշխարհախումբ կհավաքվին հեթանոս հայերը՝ տոնելու համար Վարդավառը:

Լուսավորչի ժամանակն սկսյալ, վաղեմի այդ սովորության համաձայն, մեր քրիստոնյա նախնիքը ուխտավորաբար կհամախմբվին Մշո Ս. Կարապետի շուրջը, կատարելու համար Տեր Հիստոսի Այսակերպության

Գուրյան Եղիշե մեծ վարդապետի հիշատակին, իր ծննդյան հարյուրամյակին առթիվ:

տունը Վարդավառյան հանդիսություններով միասին:



Արևելյան ժողովուրդներու մոտ յուրաքանչյուր մեծ տուն իրեն հատուկ արարողություններ և ավանդություններ ունի, եկեղեցիներ ներս, հոգևոր իմաստով, իսկ դուրսը՝ աշխարհիկ, ընկերային, զբոսական նպատակով:

Առանձնահատուկ այդ ծիսակատարություններն ու սովորությունները պատկերավոր կերպով երևան կրենք կատարվող տոնին իմաստն ու ծագումը և կոգնորեն ժողովուրդը: Անոնք նույն ատեն իրարու հետ կշաղկապեն եկեղեցիներ ներս և դուրս հավատացյալներու վարած հոգևոր, առտնին և ընկերային կյանքը:

Երբ գիտակցությամբ և ներդաշնակությամբ տեղի կունենան այս բաները, այն ատեն ոչ միայն տոնն ու անոր իմաստը կպայծառանան, այլ կարծեք թե տոնախմբողները կպայծառակերպին:

Ս. Գրիգոր Լուսավորիչ, որ հայկական հին Վարդավառի տունը փոխանակեց Քրիստոսի Պայծառակերպությամբ, շարժելից Վարդավառին կապված ինչ-ինչ սովորություններու պահպանությունը, բայց ինքն ու ժամանակը նոր և ավելի գեղեցիկ իմաստ տվին անոնց:

Վարդավառին հայերն առհասարակ սովոր էին վարդեր նվիրել, աղավնիներ թռցնել, իրարու վրա ջուր սրսկել, ժողովրդական պարեր և կայթեր կատարել, ողիմպիական խաղեր ընել, ուխտի երթալ, մատաղ կտրել և այլն: Ասոնք բոլորը մեր բնաշխարհին մեջ կկատարվեին հոծ բազմութեամբ, ոչ միայն պատմական սրբավայրերու շուրջը, այլ նաև այգիներու, պարտեզներու, ծովափերու, գետեզերքի և ուրիշ բացօդայա հարմար վայրերու մեջ:



Հետաքրքրական են և նշանակալից ինչ-ինչ գավառներու մասնավոր սովորությունները, զոր օրինակ Ագուլիսի զոկերու խնդումը, որ ժողովրդական խաղ մըն է Վարդավառին հատուկ և կկատարվեր մինչև նախորդ դարուն վերջերը:

Ըստ Ս. Սարգսյանի նկարագրութեան, ագուլիսցիք Վարդավառն առաջ խոշոր սակառի կամ կարասի մը մեջ հացահատիկ (ցորեն, գարի) կկանաչցեն, Վարդավառին անոր մեջ կտնկեն մանուկի մը հասակով ամուր փայտ մը մերթ թեւալոր, զոր կզարդարեն վարունգով, խնձորով և վարդով:

Ճաշեն ետքը կանաչով, պտուղով և ծաղիկով զարդարուն այդ սակառը կզետեղվի բաց տեղ մը, հրապարակի վրա, տարիքոտ կնոջ մը հսկողությամբ: Երկսեռ բազմությունը, խայտաբղետ հագված, նվագածությամբ և պարերով կըրջապատեն զայն: Զվարճությունները կշարունակվին մինչև ուշ երեկու: Պահապան կիրն սակառեն դուրս կբաշեն զարդարուն գավազանը և զայն բարձր բռնած կերգեն ու կպարեն ծափերով: Զվարճությանց վախճանին, վիճակ փախցնելու պես, տղամարդիկ մեկեն կհարձակին և խաղացվոր տիկնոջ ձեռքեն կհափշտակեն ու կցրվեն խնդումը, որ միևնույն ժամանակ անունն է Վարդավառի ժողովրդական այս հանդիսության և անոր կեդրոնը կազմող զարդարուն դավազանին:

Այս առթիվ խնդումի պահապանին երգած ժողովրդական սա զույգ տաղերը ցույց կուտան հսկող տիկնոջ վախը և խնդումը հափշտակողներու վրա թափած անեծքը, Ագուլիսի բարբառով.

Խնդում օգիմ վարդավ լի,
Զբրդիրքեծ խնձոր լի.
Վախիմ քա փունքս տանի,
Խնդումըս յաղիմ տանի:

Խնդումը փախցնելեն ետքը կերգեն.

Խնդումըս յաղիմ տարալ ա...
Ճոր քրանիք, այ հարալ.
Խզվրկուտոր էլի հո,

Ով ամ խրնդումըս տարալ ա,
Ասոված ք ջանիդ քուր տո,
Ով ամ խնդումըս տարած ա,
Տեսնիմ օր ա սաղ սյուն տո,
Նո կըրնչ կուտուր էլի,
Արկու ակնավ խվարի,
Գինդարու շունք պտոկ արի,
Ըրախի շունք չիք արի!:



Վարդավառի և ուրիշ տոնական նման սովորությունները՝ ավանդական, պատմական, հոգևոր և ընկերային արժեք ունին, ժողովուրդի կյանքին մաս կկազմեն: Երբ անոնք նոր զուգորդություններով նոր իմաստ կըզենուն, ավելի ևս կգեղեցկացնեն տոնն ու հանդիսությունները:

Հայերեն Վարդավառ և Պայծառակերպություն անունները միմիայն բանաստեղծական պատկերներ չեն, այլ անոնցմե յուրաքանչյուրը կներկայացնեն ներշնչող դրվագ մը մեր ազգային և կրոնական կյանքին:

Վարդավառը տոնն էր Աստղիկի: Ան կկատարվեր հայկական նավասարդին կամ նոր տարիին սկիզբը, օգոստոսին, երբ վառ է արևը, երբ իսպառ կորսված է Հայաստանի հաշվոր ձմեռան հետքը, երբ դադարած են խստաշունչ ջամիները, փարատած մռայլ ամպերը, տաքցած են դաշտերը, պտղավորված ցանքերն ու ծառերը և իրենց լրության մեջ բացված են ծաղիկները:

Գեղեցիկ է Հայաստանի վարդը: Ըստ դիցաբանության, գեղեցկության աստուծո՝ Աստղիկին տուրքն է վարդը: Ուստի հին

1 Ա. Շ. Մեացակեյան, «Հայկական զարդարվեստ», Երևան, 1955, էջ 129: Հմմտ. Ս. Սարգսյանի «Ագուլիսի բարբառը», Բ, Մոսկվա, 1933, էջ 26—27, ըստ ցուցման Ա. Շ. Մեացակեյանի (անդ):

2 Եղիշե աբեղայեղապետ Դուրյան, իր «Հին հայոց կրոնը» գործին մեջ, կծանոթագրեն, թե ըստ Արշարունյաց Գրիգորիս եպիսկոպոսի «Մեկնութիւն ընթերցութեան»-ին, «Աստղիկի նվիրված վարդը և մուրտը իբրև թե իր մարմնին փափկության պատճառով, երբ բոկ ու մեղկ կթալեր դիցունին, ոտքերին կաթկթած արյունեն կբուսնեին: Վարդը ճերմակ էր նախապես, և հետո կարմիր գույն ստացավ: Ըստ առասպելներու, Ափրոդիտեն (Աստղիկ) իր վիրավորված սիրականին՝ Ադոնիսի մոտ փութալու ատեն վարդերու վրա կոխեց և իր խոցված ոտքերու արյունեն վարդերը կարմրեցան (անդ, էջ 48—49):

Հույն դիցաբանության համաձայն, երբ Հերաս գողցավ Ափրոդիտեի զարդեղեններու արկղը, ագոր մեջն առավ դիցունիին զգեստները, և երբ հագավ զանոնք, երկրի վրա բուսան գեղեցիկ ծաղիկներ՝ վարդ, շուշան, մանուշակա (Բաբգեն Ա կաթողիկոս, «Երասեր Ավետարանեն», Անթիլիաս, էջ 129):

հայերը ուրախ-զվարթ վարդի պսակներով և վարդի փուռներով կվառնեին, այսինքն կգարդարեին Տարոնի Աստղկան արձանը: Ասկե կծագի տոնին Վարդավառ, ըստ ոմանց Վարդան³ անունը, որ կնշանակե վարդա-գարդ, վարդեղ:

Վարդավառ անունին պես հին են և պատկերագեղ վարդածղի և վարդավատն ստորոգելիները հայոց Աստղիկ դիցունվույն:



Վարդավառին կապված է նաև Զրհեղեղին հիշատակը, որմե, ըստ Ս. Գրոց, ազատեցան միայն Նոյ նահապետն իր ընտանիքով և յուրաքանչյուր տեսակե մեյմեկ զույգ անասուն և թռչուն: Ասոնցմե տապանին մեջ գտնվողներեն Նոյի ձեռքով արձակված աղավնիին վիճակվեցավ ավետել ցամաքին երևումը՝ ձիթենիի ճյուղով մը:

Զրհեղեղին հուշերովն է, որ Վարդավառին հայերը եկեղեցիեն ներս վարդի ջուր կարժակեն, իսկ զուրսը անուշ ջուր կթափեն իրարու վրա և աղավնիներ կթոցենն⁴:



Անոնք, որ մեղքին կործանարար զորության վրա գաղափար ունին, անոնք, որ Աստուծո փրկարար շնորհքին կհավատան, անոնք զժպտություն պիտի չունենան հասկրնալու, թե ինչու Վարդավառի նավակատի-քին շաբաթ օրը «իշատակ է Տապանակին հոյս և տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ» (Տօնացոյց):

Մեղքի պատճառով աշխարհս ողողող ջրհեղեղեն Աստուծո տնօրենությամբ ազա-

3 Վարդավառի մասին տրված ինչ-ինչ բացատրություններ, ինչպես հետագա երկու օրինակները, սոսկ բարոյական, հոգևորական հնարամտություններ են.

«Անուն տօնիս կոչի Վարդեվառ, զի Քրիստոս յաշխարհի որպէս ի կոկոնի ծածկեալ էր զԱստուածութիւն որ բացեալ եղև ի յարութիւնս, և յետոյ սփռեալ զհոտ աստուածութեան ընդ ամենայն երկիր» (Սիմեոն վրդ. Եւեանցի, քարոզ 68, «Դարձեալ ի վերայ Վարդավառին»): Բաղդադի հայոց եկեղեցիի ձեռագիր):

«Վասն այսօրիկ տապալ Վարդիվառ, այսինքն աւրդ աւար, զի այսօր եկալք զինուորացն Քրիստոսի ընդ ամենայն աշխարհս աւառ առին և կողոպտեցին հօգորին սատանայի» (Նույն, անդ):

4 Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան աղավնիներ թոցենլու մասին Աստղիկին նվիրած զուլխին մեջ կծանոթագրե. «Իսկ թուղններեն աղավնին, իբր սիրտարար թռչուն կպատկանեն հույն Ափրոդիտիին, ինչպես և հայ Աստղիկին, և այս պարագան կդիտվի արդեն Վարդավառի տոնին առթիվ աղավնիներ թոցենլու հայկական հին սովորության մեջ» (Եղիշե պատմաբան Դուրյան, «Հայոց հին կրոնը», Երուսաղեմ, 1933, էջ 48—49):

տեցան մարդկային սերունդն ու կենդանական նմուշները՝ Նոյան տապանին միջոցով:

Արդ, Նոյան տապանը նախատիպն է Հին Ուխտի տապանակին, որ Իսրայելի համառ խորհրդանշան դարձավ փրկության, սրբության և Արարհամեն հետո Մովսեսի միջոցով Աստուծո հետ վերստին կնքված ուխտին: Իսկ Տապանակ Ուխտին, ինչպես նաև Նոյան տապանը խորհրդանշաններն են Նոր Ուխտի Տապանակին, զոր կկազմեն Հիսուս Քրիստոսի Եկեղեցին և նաչափալոր:

Զրհեղեղը ցամեցեցավ, Նոյ և իրենները զուրս եկան Արարատի լանջքին, բայց շուտով ծայր տվին մեղքի հեղեղները, որոնք, եթե չզգուշանանք, կրնան կլանել ամբողջ աշխարհը և ընկղտվել ամենքս, զորս Քրիստոս ուզեց ազատել իր արյամբ:

Պայծառակերպության տոնով Եկեղեցին ցույց կուտա ոչ միայն հավիտենական փրկության հույսը, այլ նաև վերանորոգության, նոր ստեղծագործության և Քրիստոսի նման պայծառակերպելու հնարավորությունը, պայմանով որ, ինչպես որ Աստված կխոնարհի և կմոտենա մեզ, այնպես ալ մենք վերանանք դեպի հոգեկան և բարոյական բարձունքներ Սինայի, Թաբորի, Հերմոնի, և մոտենանք Աստուծո՝ ի զին ամեն զոհողության:

Ուրեմն, Քրիստոսի Պայծառակերպության լույսով բանանք մեր աչքերը, տեսնելու համար, թե իսկապես ինչ է Վարդավառը, և ինչ են իմաստներն այն մասնակի երևութիւններուն, որոնց ականատես կլինինք Վարդավառին:

Այսպես ընելով, պիտի տեսնենք, թե մարդոց հոգեկան վերելքին ազդակներ կհանդիսանան Վարդավառի առթիվ հայտնարեված առանձնահատուկ երևութիւնները, ջուրը՝ զոր իրարու վրա կթափենք իբր նշանակ մկրտության և սրբության ավազանին, աղավնին՝ զոր կթոցենք իբր խորհրդանշան ոչ թե տուփական սիրտ և ներշնչման, քանի որ Ս. Հոգին անով կկերպարանվի Քրիստոսի մկրտութիւնն ասդին, մարդական մըրցանքներն ու զորեղ մկանները՝ իբր նշանակ ժուժկալության և հոգեւոր կրթանքի, կտրված մատաղները՝ իբր նշանակ զոհողության և երախտագիտական արտահայտության, վարդի փուռներն ու պսակները՝ իբր նշանակ մեղքի վրա տարված հաղթանակին վարձատրության, պարերն ու խաղերը՝ հոգեւոր խրախճանքի և ցնծության:

Ահա բուն իմաստը Քրիստոսի Պայծառակերպության տոնին, զուգորդված Վարդավառի հատուկ հայ ժողովրդական ծիսակատարությանց և սովորությանց:

Իբրև հետաքրքրական գիտելիք ավելցուն ենք, թե ուղղափառ ուսանողն ալ Պայծառակերպության առթիվ, որ ամենեն ժողովրդական տոներեն մեկն է, խնձառ և մեղր կրերեն եկեղեցին, օրհնել կուտան և կրածնեն ներկաներուն, Ս. Հաղորդության բաշխումեն ետքը, իբր նշանակ Աստուծո ստեղծագործության բաշխ և փաղցր լինելուն: Ռուսերն ասիկա կրնեն նույն ատեն ցուցնելու համար գեղեցկությունն ու փառքը այն աշխարհին, որուն տեսիլքն ունեցալ Տերն մեր Հիսուս Քրիստոս Թաբորի վրա, և որ դարձալ պիտի հայտնվի աշխարհի կատարածին:

Վարդավառի շրջանին, Իսրայելացիք ալ կանխալ յոթն օր Տաղավարահարաց տոնը կկատարեն ի հիշատակ քառասուն տարի անապատները թափառելուն և «ծաղկօք և ոստիւք ծառոց միմեանց ընծայաբերք լինէին և ուրախանային յիշելով զբարեբարութիւնս և զերախտիսն Աստուծոյ»⁵:

5 Սիմեոն վրդ. Երևանցի, քարոզ 68, «Դարձեալ ի վերայ Վարդավառի» (Բաղդադի հայոց եկեղեցիի ձեռագիր, էջ 327):

Վարդավառին, հուլները մեծ հանդիսութեամբ, ծաղիկներու և ոստերու նվիրաբերումով կկատարեն տոնը Ափրոդիտի, զոր կհամարեն ծնած ծովու սպիտակ փոփուրներեն: Անոնց մոտ ալ ասիկա փոխանակվեցալ տոնախմբությանն Այլակերպության Քրիստոսի, «Որ ի կուսէն կուսածին մարմնով ծնաւ կարմիր և սպիտակ»⁶:

Ներկայիս հին Վարդավառին զուգորդած է Այլակերպության տոնը, զոր նվրդացիք կկատարեն օգոստոս 6-ին, իսկ հայերս՝ Ս. Հարութենէն հարյուր օր ետքը, ի յիշատակ Քրիստոսի Պայծառակերպության⁷ և ի խորհուրդ Որդվո Մարդո մյուս անգամ գալըստյան⁸:

6 Նույնը, անգ, էջ 326:

7 Մատթ. Ժե, Մրկ. Թ., Ղուկաս Թ:

8 Մատթ. ԻԴ 27—31, Մրկ. ԺԳ 24—27, Ղկա. ԻԱ 25—27:

